Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Արժանապատիվ Տ. Վարուժան քհն. Տերտերյանը (ավազանի անունով՝ Վարուժան) ծնվել է 1968 թ. հունիսի 22-ին Իրանում:

1969 թ. ընտանիքով ներգաղթել են Հայաստան և բնակություն հաստատել Արարատի շրջանի Լուսառատ գյուղում:

1975-85 թթ. ընթացքում սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1985 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Մեմարան:

1986-88 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է Հոգևոր Մեմարանում:

1990 թ. Սեպտեմբերի 15-ին, Խաչվերացի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի:

1993 թ. ավարտել է Հոգևոր Մեմարանի վեցամյա դասընթացը լավ առաջադիմությամբ: Նույն թվականին պաշտպանել է ավարտաճառ՝ նյութ ունենալով «Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը»՝ արժանանալով «գերազանց» գնահատականի: Արժանապատիվ Տ. Վարուժան քահանան 1993 թ. մինչև քահանայական ձեռնադրությունը իր հոգևոր ծառայությունը կատարել է Վեհափառ Հայրապետի մոտ իբրև քարտուղար:

1996 թ. Մայիսի 19-ին հայրապետական տնօրինությամբ ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի:

Տ. Վարուժան քահանան 40-օրյա պահոց շրջանից հետո իր քահանայական ծառայությանը պիտի կոչվի Արարատյան Հայրապետական թեմից ներս՝ իբրև Հոգևոր հովիվ Մասիս քաղաքի և շրջակա գյուղերի: